Արձանագրություն 4
«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/187» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

12.09.2019թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Թ. Երկանյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Հովակիմյան /գնահատող/, Գ. Գրիգորյան /գնահատող/, Գ. Հակոբյան /բացող/, Մ. Թերզյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Եղիազարյան

**1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերը ներկայացնելու մասին**

(Թ. Երկանյան)

Ընդունել ի գիտություն, որ.

1.1 <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի/այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել էր եզրակացություն, համաձայն որի մասնակցի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

1.2 «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/187» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակցի կողմից էլեկտրոնային կայքի միջոցով հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել են հրավերի պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:*

**2. «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/187» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակիցների մասին**

(Թ. Երկանյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետով ընդունված որոշումը և <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/187» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվել «Բարսիս» ՍՊԸ-ն:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

**3. Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին**

(Թ. Երկանյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել վերը նշված մասնակիցներին:

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն սահմանել անգործության ժամկետ հինգ օրացուցային օր:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

**Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները**

*Հանձնաժողովի նախագահ՝* *Թ. Երկանյան* ________

*Հանձնաժողովի անդամներ՝* *Ա. Հովակիմյան* ________

*Գ. Գրիգորյան* ________

*Գ. Հակոբյան* ________

*Մ. Թերզյան* ________

*Հանձնաժողովի քարտուղար՝* *Մ. Եղիազարյան* ________